Անհրաժեշտ շրջադարձ դեպի Ռուսաստան. հայ-ռուսական հարաբերությունները

ՔՈՐԻ ՉԵՐԻՆԳԹՈՆ
Կոլումբիայի համալսարան, ԱՄՆ

Հոդվածում ներկայացվում են հայ-ռուսական հարաբերությունները Հայաստանի անկախության վերականգնումից հետո: Քննարկվում են այդ ժամանակաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի քաղաքականություններն ու միմյանց նկատմամբ դիրքորոշումները: Ներկայացվում են Հայաստանի առևտրային հետաքրքրությունները ԵՄ-ում և դրանք օգտագործվում են՝ Հայաստանի արտաքին քաղաքականության նպատակադրումներն իրական արդյունքերի հետ համեմատելու նպատակով: Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում զգալիորեն մեծ է, ինչի արդյունքում թվում է, թե երկիրը պարտադրված է շարժվել քաղաքական և տնտեսական կոնկրետ ուղղությամբ: Տարիներ շարունակ Հայաստանը դրսևորել է արտաքին քաղաքական որոշումների կայացման գործում Ռուսաստանից սահմանազատվելու ցանկություն, սակայն դա ամբողջությամբ չի հաջողվել իրագործել տարածաշրջանում Ռուսաստանի գերակայության պատճառով: Հոդվածում ամփոփ քննարկվում են նաև ռուս-ադրբեջանական և ռուս-վրացական հարաբերությունները՝ հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունն ավելի պատկերավոր ներկայացնելու համար: Սա չափազանց կարևոր է, քանի որ թեև Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանն աշխարհագրական առումով հարևաններ են, կան բազմաթիվ այլ գործոններ, որոնք ազդում են տարածաշրջանում Ռուսաստանի գերակայության վրա: Եթե Ադրբեջանին հաջողվել է հավասար կապեր հաստատել այլ խոշոր տերությունների հետ, ապա Հայաստանը շարունակում է համագործակցել ինչպես Արևմուտքի, այնպես էլ Ռուսաստանի հետ՝ վերջինիս հետ պատմականորեն պահպանելով ավելի սերտ հարաբերություններ, ապա Վրաստանն ամբողջությամբ շրջվել է դեպի Արևմուտք:

Բանալի բառեր
Հայաստան, Ռուսաստան, Եվրոպական միություն, արտաքին քաղաքականություն, Եվրասիական տնտեսական միություն, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Նախաբան

1991թ. անկախացումից ի վեր Հայաստանը վարում է հավասարակշռված արտաքին քաղաքականություն, ինչը մի խումբ հետազոտողները, որոնց թվում՝ Ս. Մինասյանը, հաճախ բնորոշում են որպես կոմպլեմենտարիզմ (բազմավեկտոր արտաքին քաղաքականության ձև)[1]: Մինասյանը նշում է նաև, որ կոմպլեմենտար արտաքին քաղաքականությունը պահանջում է մշտապես հաշվի առնել համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ խոշոր խաղացողների ցանկությունները: Հայաստանը վարում է հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ միաժամանակ գոհացնելով Ռուսաստանին և, անհրաժեշտության դեպքում, հանդես գալով որպես Միացյալ Նահանգների դաշնակից Կովկասում: Հայաստանը ձգտում է նաև դեպի Եվրոպա՝ չնայած նրան, որ 2015 թվականից երկիրը սերտորեն ինտեգրված է Ռուսաստանի և նրա գլխավորած տնտեսական համակարգերում: Այդուհանդերձ, 2017թ. ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրման արդյունքում Հայաստանը դուրս չմնաց առևտրային և զբոսաշրջային շահավետ պայմանագրերից՝ միաժամանակ չհեռանալով Ռուսաստանից: 2018թ. Թավշյա հեղափոխությունը զգալի ազդեցություն ունեցավ ստեղծված իրավիճակի վրա, քանի որ դա հնարավորություն տվեց խաղաղ ճանապարհով հեռանալ երկրի քաղաքական առաջնորդին՝ ակնկալելով, որ նոր առաջնորդը կպաշտպանի ազգային շահերը ներպետական և միջազգային մակարդակներում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի առնչությամբ[2]:

---

[1] **Minasyan S.,** Multi-Vectorism in the Foreign Policy of Post-Soviet Eurasian States, *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization,* 2012, **20**, 3, 268-273.

[2] **Davtyan V.**, **Markarov A.,** Post-Velvet Revolution Armenia's Foreign Policy Challenges, *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization*, 2018, **26**, 4, 1-16.

Ավելին, թեև Հայաստանը փորձում է վարել համակարգային և հավասարակշռված արտաքին քաղաքականություն, ըստ Քորնելի, 2011թ. Հայաստանը հասել էր մի կետի, երբ այլևս չէր կարող անել այլ բան, քան առաջնայնությունը տալ Ռուսաստանին՝ բոլոր մնացած տնտեսական ու քաղաքական կարևոր խաղացողներից, և կենտրոնանալ վերջինիս հետ իր հարաբերությունների վրա[3]: Կա տարածված կարծիք, որ դա պայմանավորված է անվտանգության նկատառումներով և Հայաստանի կախվածությամբ ռուսական էներգակիրներից ու առևտրաշրջանառությունից, սակայն դա կապված է նաև ներպետական խնդիրների ու հետաքրքրությունների հետ[4]: Հայաստանում Ռուսաստանի ոչ համաչափ ազդեցությունն ավելի մանրամասն կքննարկվի ստորև՝ Հայաստանի արտաքին քաղաքականության իրականացման համատեքստում: Համեմատություն կանցկացվի Ադրբեջանի և Վրաստանի դեպքերի հետ՝ Կովկասում ռուսական ներկայության տարածաշրջանային ասպեկտները և Հայաստանի հետ փոխգործակցության առանձնահատկությունները միմյանցից տարբերելու համար:

Կդիտարկվեն նաև հայ-ռուսական հարաբերությունները՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի լարված հարաբերությունների լույսի ներքո: Հաշվի առնելով այն, որ հակամարտությունն ընկած է Հայաստանի արտաքին քաղաքականության ձևավորման հիմքում և դրանում կա նաև Ռուսաստանի գործոնը, ԼՂ հակամարտությունը կդիտարկվի որպես հայ-ռուսական հարաբերությունների ևս մեկ համակարգային տարր:

---

[3] **Cornell S.E.,**The Caucasus in Limbo, *Current History*, 2011, 110, 738, 283-289.

[4] **Delcour L., Wolczuk, K.,** The EU's Unexpected "Ideal Neighbour"? The Perplexing Case of Armenia's Europeanization, *Journal of European Integration*, 2015, **37,** 4, 491-507.

Ռուսաստանի օժանդակության պահպանումը կոմպլեմենտարիզմի շրջանակներում

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ հավատարիմ է կոմպլեմենտարիզմի գաղափարին: Վերջինս ենթադրում է, որ պետությունը չունի խիստ ընդգծված արտաքին քաղաքական ուղղություն: Հայաստանի կառավարությունը չունի բացառապես արևմտամետ կամ ռուսամետ դիրքորոշում, այլ փորձում է լավ հարաբերություններ պահպանել նաև այլ խոշոր միջազգային դերակատարների հետ[5]: Ըստ Մինասյանի, հայկական մեծ սփյուռքն ունի զգալի ազդեցություն արտաքին քաղաքականության այդ մոտեցման վրա՝ ի տարբերու-թյուն Ադրբեջանի, որը չունի մեծ թվով աշխարհասփյուռ ժողովուրդ: Սակայն, ժամանակի ընթացքում Հայաստանը կարող է հայտնվել այնպիսի եզակի իրավիճակում, երբ նրանից պահանջվի ընտրություն կատարել Ռուսաստանի և Արևմուտքի միջև:

2007թ. Համաշխարհային բանկը նշում էր, որ Հայաստանը դանդաղորեն ընթանում է ԵՄ տնտեսական քաղաքականության ուղղությամբ և ցանկություն ունի մասնակցելու Եվրոպայի միջազգային առևտրային հաջողված նախագծերում: Քանի որ Հայաստանը շարժվում էր ԵՄ-ի ուղղությամբ, այն կարողացավ Ռուսաստանի հետ իր տնտեսական «պարտատոմսերի» մի մասը տեղափոխել Արևմուտք: Արդյունքում, դեպի Ռուսաստան արտահանումների 56 տոկոսը և ներկրումների 49 տոկոսը 1999թ. դարձավ համապատասխանաբար 25 և 27 տոկոս, իսկ 2003թ.՝ 19 և 23 տոկոս[6]: 1990-ական թվականներին և 2000-ական թվականների սկզբին Ռուսաստանի նվազող ներգրավվածությունը Հայաստանի տնտեսության մեջ ցույց է տալիս, որ թեև Հայաստանը վարում էր կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն, ցանկություն կար ընդլայնելու ինտեգրումը արևմտյան ուղղությամբ: Դրա հավանա-

---

[5] **Minasyan S.,** նշվ. աշխ.:

[6] **Mitra S., et al**, Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, 2007, 351.

կան պատճառներից էր այն, որ Հայաստանը նշմարում էր պոտենցիալ տնտեսական աճ՝ ԵՄ-ին ավելի սերտ ինտեգրման ճանապարհով:

Միաժամանակ, Ռուսաստանն արդեն տևական ժամանակահատված ունի Հայաստանի վրա ազդեցության զգալի լծակներ, ինչը լուրջ մարտահրավեր է, որ երկիրն ավելի սերտ ինտեգրվի ԵՄ տնտեսական համակարգում: Այդ լծակները պայմանավորված են ոչ միայն այն հանգամանքով, որ Հայաստանն ունի Ռուսաստանի նկատմամբ խոշոր պարտք, որի պատճառով գազամատակարարման հարցում հենվում է այնպիսի ընկերությունների վրա, ինչպիսիք են «Իտեռան» և «Գազպրոմը»[7], այլև նրանով, որ Հայաստանի ենթակառուցվածքների զգալի մասը պատկանում է ռուս ներդրողների, իսկ Վրաստանով անցնող Հայաստանի առևտրային ճանապարհները մշտապես Ռուսաստանի վերահսկողության տակ են[8]: Բացի այդ, Հայաստանի խոշոր պարտքի պատճառով Ռուսաստանի կառավարությունն ունի զգալի դերակատարություն Հայաստանի էներգետիկայի ոլորտի վրա, ինչը «լրացուցիչ քաղաքական լծակ է Հարավային Կովկասում իր գլխավոր դաշնակցի նկատմամբ»[9]:

Հայաստանի հարևան Ադրբեջանը չի բախվում այդպիսի խնդիրների, քանի որ հարուստ բնական ռեսուրսների շնորհիվ ի վիճակի է «գնել իր ազատությունը»: Այդուհանդերձ, Հարավային Կովկասի երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) շրջանում կա տարածված տեսակետ, որ Ռուսաստանն ունի չափազանց մեծ գերիշխանություն Հարավկովկասյան տարածաշրջանում: Եթե անգամ Հայաստանը ցանկանա ազատվել Ռուսաստանի լուրջ վերահսկողությունից, ապա կունենա էական սահմանափակումներ տարածաշրջանում Ռուսաստանի ամրապնդված գերակայության

---

[7] **Mitra S., et al**, նշվ. աշխ., էջ 45:
[8] **O'Sullivan J.,** Caucasus Diary, *National Review*, 2008, 60, 17, 28-32.
[9] **Danielyan E.,** Russia Tightens Grip on Armenia With Debt Agreements, *Eurasianet*, 2003, https://eurasianet.org/russia-tightens-grip-on-armenia-with-debt-agreements (04/04/17).

պատճառով: Վերջինս դրսևորվում է ոչ միայն էներգամատակարարման, այլև անվտանգության ոլորտներում:

Հայտնի է, որ Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, ինչն իրատեսորեն նշանակում է, որ վերջինս ռազմական բաղադրիչի առումով մեծապես ապավինում է Ռուսաստանին: Թեև Ռուսաստանը պաշտոնապես ներգրավված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստանին հաճախ է հիշեցնում, թե ումից է կախված երկրի անվտանգությունը: Վ. Սոկորը նշում է, որ երբ 2013թ. Հայաստանը ցանկություն հայտնեց ստորագրել Եվրամիության Առևտրային և Ասոցացման համաձայնագրերը, տեղի ունեցավ հանդիպում ՀՀ պաշտոնյաների և նախագահ Վլադիմիր Պուտինի միջև: Հանդիպումն ուներ ռազմավարական նպատակ, այն է՝ հիշեցնել Հայաստանին ռուս-հայկական պաշտպանական գործընկերության կանորության մասին: Պուտինի հետ հանդիպումից կարճ ժամանակ անց Հայաստանը լրջորեն ճշգրտեց իր արտաքին քաղաքականության ուղեգիծը՝ ամրապնդելով Ռուսաստանի հետ բարեկամական կապերը և միանալով Եվրասիական տնտեսական միությանն ու Եվրասիական մաքսային միությանը:

Սոկորը նաև նշում է, որ թեև Հայաստանը կունենա ֆինանսական վնասներ տնտեսական քաղաքականության ուղեգծի փոփոխության արդյունքում, առանց Ռուսաստանի ռազմական ներկայության հնարավոր են ռազմական նշանակության անդառնալի կորուստներ: Եթե Հայաստանը կտրուկ քայլեր ձեռնարկի Ռուսաստանի հետ հարաբերություններում՝ ի նպաստ արևմտյան ուղղությամբ հարաբերությունների ավելի խորացման, ապա կարող է բախվել լուրջ ռիսկերի՝ կապված սեփական երկրի և Լեռնային Ղարաբաղի վրա ադրբեջանական կողմի հարձակումների հետ: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանը ստիպված չէ այդ չափով հաշվի առնել Ռուսաստանի քաղաքական դիրքորոշումները, քանզի թույլ է կախվածությունը Ռուսաստանի ռազմական ու տնտեսական աջակցությունից: Վրաստանը ևս կախում չունի Ռուսաստանի

ռազմական օժանդակությունից և, քանի որ այն ՀԱՊԿ վեց անդամների թվում չէ, չունի Ռուսաստանի նկատմամբ ռազմական կամ այլ պարտավորություններ: Ուստի, Կովկասյան տարածաշրջանում այդ սահմանափակումն ինչ-որ առումով բնորոշ է միայն Հայաստանին:

Ավելին, չնայած Ռուսաստանը խոչընդոտեց ԵՄ-ի հետ համաձայնագրերի ստորագրմանը և, փոխարենը, 2013թ. համոզեց Հայաստանին միանալ Ռուսաստանի տնտեսական նախագծերին[10], Հայաստանը շարունակում է փոփոխություններ կատարել իր տնտեսական քաղաքականության մեջ՝ Ասոցացման և Առևտրային համաձայնագրերում նախանշված ԵՄ չափանիշներին համապատասխան[11]: 2017թ. Հայաստանը ստորագրեց ՀԸԳՀ-ն, որն, ըստ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության, զգալիորեն ամրապնդել է Հայաստանի և ԵՄ-ի համար «փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, սեկտորալ և առևտրային ոլորտները»[12]:

Հատկանշական է այն ձևակերպումը, որ Հայաստանի և ԵՄ-ի մերձեցումը «փոխադարձ հետաքրքրությունների» շուրջ է: Դա նշանակում է, որ Հայաստանը կարող է շարունակել հարաբերությունները զարգացնել ԵՄ-ի հետ՝ առանց հրաժարվելու աշխարհի այլ անկյուններում իր հետաքրքրություններից: Դելկուրը և Վոլչուկը նշում են, որ Հայաստանի ցանկությունն՝ ամրապնդելու

---

[10] **Ademmer E., Delcour L.,** With a Little Help from Russia? The European Union and Visa Liberalization with Post-Soviet States, *Eurasian Geography and Economics*, 2016, 57, 1, 89-112; **Socor V.,** Armenia Trades European Union Association for Russian Protection, *Eurasia Daily Monitor*, 2013, https://jamestown.org/program/armenia-trades-european-union-association-for-russian-protection/, (15/4/2017); **Socor V.,** Russia's Custom's Union Project Finds Acceptance in Armenia, *Eurasia Daily Monitor*, 2013, https://jamestown.org/program/russias-customs-union-project-finds-acceptance-in-armenia/, (15/4/2017).

[11] Armenia to Continue to Adapt 'Key' EU Directives, Despite Joining Customs Union. *BBC Monitoring Trans Caucasus Unit*, 2013, Retrieved from *LexisNexis,* (23/04/2017).

[12] European External Action Services, Fact Sheet on EU-Armenia Relations, 2018, https://eeas.europa.eu/topics/education/4080/fact-sheet-eu-armenia-relations_en (18/01/2019).

իր կապերը Եվրոպայի հետ, պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը որպես «արդիականացման ճանապարհ» դիտարկում է ոչ թե Ռուսաստանն, այլ Եվրոպան[13]: Դա նշանակում է, որ ենթակառուցվածքների ու տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ հետագա համագործակցության և հասարակության արդիականացման ավելի մեծ ներուժ Հայաստանը տեսնում է ոչ թե Ռուսաստանի, այլ ԵՄ-ի կողքին[14]:

Միաժամանակ, Ռուսաստանի հետ անվտանգության ցանցային համակարգի պատճառով Հայաստանը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ «կարող է օգտագործել ԵՄ-ի հետ կապերը ոչ թե փոխարինելու կախվածությունը Ռուսաստանից, այլ լրացնելու այն»[15]: Թեև այդ մեջբերումն արվել է 2015թ. հոդվածում, այն արդիական է նաև այսօր: 2018թ. Թավշյա հեղափոխությունից հետո վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ Ռուսաստանի հետ կապերի ամրապնդումն իր վարչակազմի քաղաքական նպատակն է[16]:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և այն հանգամանքը, որ Եվրոպայի հարաբերությունները Հայաստանի հետ ընդլայնվում են այն պահանջմունքերի արդյունքում, որոնք առաջ են գալիս Ռուսաստանի հետ շարունակական մերձեցումից, չի կարելի վստահաբար պնդել, որ քաղաքական վերնախավը չի ցանկանա ամրապնդել հարաբերությունները ԵՄ-ի հետ: Այլ կերպ ասած, Հայաստանը որևէ խոշոր ուժ չի փոխարինում մեկ այլ ուժով: Այդ հարցում Փաշինյանը կիսում է նախորդ քաղաքական վերնախավի տեսակետն առ այն, որ ԵՄ-ին անդամակցելու դրդապատճառներն այնքան էլ մեծ չեն, հատկապես հաշվի առնելով այն, որ Հայաստանի ազգային տնտեսական պահանջմունքերը բավարար-

[13] **Delcour L., Wolczuk, K.,** նշվ. աշխ., էջ 502:
[14] **Delcour L., Wolczuk, K.,** նշվ. աշխ., էջ 493:
[15] **Delcour L., Wolczuk, K.,** նշվ. աշխ., էջ 502:
[16] **Pinchuk D., Osborn A.**, New Armenian PM tells Putin he wants closer ties with Russia, Reuters, 2018, https://www.reuters.com/article/us-russia-armenia-putin-pashinyan/new-armenian-pm-tells-putin-he-wants-closer-ties-with-russia-idUSKCN1IF1A3, (19/01/2019).

վում են այլ միջոցներով (օրինակ, ՀԸԳՀ-ի միջոցով)[17]: Ուստի, կարելի է համարել, որ ԵՄ-ին անդամակցությունը նպաստավոր չի լինի Հայաստանի որդեգրած կոմպլեմենտար քաղաքականության պահպանման տեսանկյունից:

Ռուսաստանի ազդեցության լծակներից է նաև այն, որ Հայաստանի տնտեսությունը զգալիորեն կախված է Ռուսաստանում ապրող հայերի տրանսֆերտներից[18]: Ռուսական փողից այդպիսի կախվածությունը տնտեսական աջակցության նպատակով նշանակում է, որ Ռուսաստանում ապրող հայերը, ովքեր Հայաստան են փոխանցում տրանսֆերտներ, ոչ թե զարգացնում են Հայաստանի ներքին տնտեսությունը, այլ ոչ միտումնավոր կերպով լճացնում են երկրի քաղաքական և տնտեսական ոլորտները: Արդյունքում չի արձանագրվում նաև բավարար առաջընթաց՝ աղքատությունը վերացնելու ուղղությամբ[19]: Հետևապես, քանի որ Ռուսաստանից եկող տրանսֆերտները կազմում են ՀՆԱ-ի զգալի մասը, եթե Հայաստանը մոտ ապագայում լուրջ քայլեր չձեռնարկի դրանք կրճատելու ուղղությամբ, ապա պատեհ առիթի դեպքում դա կարող է դառնալ Հայաստանի հասարակական կարծիքի վրա ազդեցության կարևոր լծակ՝ հայ-ռուսական հարաբերությունների առնչությամբ:

Արդի միտումները ցույց են տալիս, որ անկախ նրանից, թե որքան հաջող է Հայաստանն աշխատում միջազգային քաղաքական ասպարեզում տարբեր դիրքորոշումներ ունեցող խոշոր դերակատարների հետ և որքան մեծ է կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն վարելու ցանկությունը, կան բնական ընթացիկ զարգացումներ, որոնք Հայաստանին կստիպեն իր հետագա նախաձեռնություններում մեծամասամբ ապավինել Ռուսաստանին:

---

[17] **Delcour L.,Wolczuk, K.,** նշվ. աշխ., էջ 493:

[18] **Ademmer E., Delcour L.,** նշվ. աշխ., էջ 89-112; **Tariver E.,** FCO Recognizes Armenian Diaspora's Influence on Nagorno-Karabakh Conflict, *Trend News Agency*, 2014, retrieved from *LexisNexis*, (23/4/2017); **Mitra et al,** նշվ. աշխ., էջ 147-192:

[19] **Tariver E.,** նշվ. աշխ.:

Ուստի, կարելի է պնդել, որ չնայած Հայաստանն ունի բազմաթիվ դաշնակիցներ ամբողջ աշխարհում, այն պետք է հաշվի առնի Ռուսաստանի դիրքորոշումները, քանզի վերջինս պատմականորեն սովոր է, որ Հայաստանը պետք է սերտորեն կապված լինի իր հետ: Դա մասամբ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Ռուսատանում հայերն ունեն զբաղվածության բարձր մակարդակ:

Ի տարբերություն դրան, Ռուսասատանից իրականացվող տրանսֆերտները չեն կազմում ադրբեջանական տնտեսության զգալի մասը, քանի որ Ադրբեջանն ունի նավթով հարուստ պետության կարգավիճակ[20]: Ուստի, ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանը պարտավոր չէ ապավինել Ռուսաստանին՝ իր տնտեսական զարգացումն ապահովելու համար: Բացի այդ, քանի որ ադրբեջանական կառավարությունն ունի հարուստ նավթային պաշարներ, այն միշտ չէ, որ հաշվետու է իր քաղաքացիների առջև[21]: Ադրբեջանի վրա Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակվում է երեք գործոններով՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, էներգակիրների տեղափոխման ուղիներ, Ռուսաստանում ադրբեջանական բավական մեծ սփյուռք: Ադրբեջանի և Հայաստանի դեպքերի համեմատության արդյունքում ակնհայտ է, որ Հայաստանը պետք է աշխատի Ռուսաստանի հետ՝ անվտանգության նկատառումներով: Հետևաբար, Հայաստանն ունի ավելի մեծ կախվածություն Ռուսաստանից, քան Ադրբեջանը: Այդուհանդերձ, թեև Ռուսաստանի ազդեցությունն ավելի մեծ է Հայաստանում, վերջինս վայելում է ավելի մեծ ժողովրդավարական ազատություն, քան Ադրբեջանը, քանի որ Հայաստանը ռանտյե պետություն չէ, ինչպես Ադրբեջանը:

[20] **Ross M.L**., Does Oil Hinder Democracy?,*World Politics*, 2001, 53, 329-332.
[21] Նույն տեղում:

Հասարակական կարծիքը, պատմությունը և Ռուսաստանի հետ հարաբերությունները

Հայաստանում հասարակական կարծիքի վերաբերյալ զեկույցները, թեև դրանք բավական սահմանափակ են, ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ հայերը ողջունում են Ռուսաստանի լայնածավալ ներգրավվածությունը երկրի կառավարման համակարգում և տնտեսության մեջ: «Հայաստանում ընդունվում է Ռուսաստանի Մաքսային միության նախագիծը» վերնագրով հոդվածում Սոկորը նշում է, որ հայերի մեծ մասը կողմ էր Ռուսաստանի հետ առևտրային հարցերի շուրջ միավորմանը, քանզի դա կամրապնդեր Հայաստանի կապերը Լեռնային Ղարաբաղի հետ՝ միաժամանակ պաշտպանելով Հայաստանը հարևան թշնամիներից[22]:

2013թ. Հայաստանի քաղաքական կուրսի փոփոխությունն առաջ չբերեց հասարակության լուրջ ընդվզում: Սոկորը նշում է, որ կառավարության որոշմանը մեծամասամբ անհամաձայնություն հայտնեցին մտավորականները, իսկ բողոքի ակցիաներն այնքան մեծամասշտաբ չէին՝ կառավարության կարծիքի վրա ազդելու համար[23]: Այդուհանդերձ, դրանից կարճ ժամանակ անց ՀՀ կառավարությունը որոշեց, որ պետք է «ապացուցի Եվրոպային, որ Հայաստանը վարում է կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն», ինչը դրսևորվեց խորհրդարանական համակարգին անցմամբ[24]: Դրան հաջորդեց ՀԸԳՀ-ի ստորագրումը, որը Հայաստանի՝ Արևելքից Արևմուտք անցում կատարելու, մեխանիզմներից է:

Նորագույն պատմությունը ցույց է տալիս, թե ինչու վերջին տարիներին Հայաստանը չէր կարող հրաժարվել Ռուսաստանի հետ

---

[22] **Socor V.,** Op. cit.: Russia's Custom's Union Project Finds Acceptance in Armenia.

[23] Նույն տեղում:

[24] **Iskandaryan, A.**,The Velvet Revolution in Armenia: How to Lose Power in Two Weeks, *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization*, 2018, **26**, 4, 462-475.

ավելի սերտ հարաբերություններից: Ռ. Կիրակոսյանը նշում է, որ թեև անկախացումից ի վեր Հայաստանը փորձում է վարել կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն, 1991 թվականից ստիպված է մեծապես ապավինել Ռուսաստանին, քանի որ անկախ պետության կարգավիճակն անակնկալ էր: 1990-ական թվականներին և 2000-ական թվականների սկզբին Հայաստանն ավելի կոմպլեմենտար էր, քան այսօր, քանի որ 2007-8 թվականներից ավելի ու ավելի ակնհայտորեն դրսևորվող Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումները չեն կարող չդրսևորվել Հարավային Կովկասում և, մասնավորապես, Հայաստանի հետ հարաբերություններում: Հայաստանն ակնհայտորեն «քիչ բան է արել իր ավանդական հպատակությունը Ռուսաստանին փոխելու համար, ինչը մտահոգությունների առարկա է»[25]: Թեև երկիրը փորձեր է անում դառնալ ավելի արևմտամետ, այն միաժամանակ ակտիվ հարաբերություններ է պահպանում Ռուսաստանի հետ արտաքին քաղաքականության տարբեր ճակատներում: Ակնհայտ է, որ կոմպլեմենտարիզմի համակարգն անպայմանորեն կայուն չէ, երբ պետությունը փորձում է զուգահեռ աշխատել մրցակից գերտերությունների հետ:

Միաժամանակ, 1990-ական թթ. Հայաստանը վարում էր այնպիսի քաղաքականություն, որի նպատակներից էր հայերենը դարձնել երկրի միակ պաշտոնական լեզուն, թեև պաշտոնական Մոսկվան պարբերաբար փորձում էր նույն կարգավիճակը տալ ռուսաց լեզվին՝ փափուկ մեթոդների միջոցով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Հայաստանն այդ որոշումը կայացրել էր, այն նույն պատճառներով, ինչ Էստոնիան[26]: Երբ վերջինս սկսեց կառավարման և կրթության ոլորտներում լեզվի փոխակերպման գործընթացը, դրա հիմնական նպատակն էր էթնիկ ռուսներին դնել

[25] **Giragosian R.,** Armenia's Search for Independence, *Current History,* 2014, 113, 285.
[26] **Abrahamian L.,** *Armenian Identity in a Changing World*, 2006, 73-77.

ոչ շահեկան դիրքում և վերակենդանացնել ազգային մշակույթը[27]: Այդուհանդերձ, ըստ Լևոն Աբրահամյանի, հայերենին նախապատվություն տալու պատճառները նույնը չէին, ինչ Էստոնիայի դեպքում էր: Հայաստանում մի շարք խնդիրների պատճառն այն էր, որ Ադրբեջանից եկած հայ փախստականները ռուսախոս էին և ունեին բացասական հավաքական հիշողություն ռուսաց լեզվի օգտագործման վերաբերյալ՝ կապված ԽՍՀՄ վերահսկողության շրջանի հետ[28]: Ուստի, հայերենը միակ պաշտոնական լեզու դարձնելն ուղղակիորեն ուղղված չէր Ռուսաստանի և ռուսների դեմ: Դա գիտակցված որոշում էր, որի նպատակն էր վերականգնել ազգի համերաշխությունն ու անվտանգությունը՝ մայրենի լեզվի միջոցով:

Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանն ունի ավելի վառ արտահայտված բացասական վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ՝ վերջինս համարելով նվաճող, որը ձգտում է ստանձնել Ադրբեջանի նկատմամբ վերահսկողություն[29]: Ըստ Ռ. Հուսեյնովի, ռուսաց լեզուն Ադրբեջանից դուրս մղելու շարժառիթները հիմնված էին ազգային հպարտության շարժման վրա, որի նպատակն էր Ռուսաստանին ցույց տալ, որ Ադրբեջանը մեկընդմիշտ ազատվել է ռուսական վերահսկողությունից: Ուստի, կարելի է արձանագրել, որ այսօր Հայաստանն ավելի մոտ է Ռուսաստանին, քան Ադրբեջանը՝ Հայաստանում Ռուսասատանի վերահսկողության ու մշակույթի ընդունման պատմական հիմքի առկայության պատճառով: Հայաստանը պատմականորեն գտել է Ռուաստանի գերակայությունն ընդունելու ճանապարհ՝ միաժամանակ պահելով հայ ազգի հպարտության ցանկալի աստիճանը:

---

[27] **Laitin D.,** The Four Nationality Games and Soviet Politics, Journal of Soviet Nationalities, 1992, 2, 126.

[28] **Abrahamian L.,** նշվ. աշխ.:

[29] **Huseynov R.,** Russian Language in Azerbaijan: An Outdated Relic?,*New Eastern Europe*, 2016, http://neweasterneurope.eu/old_site/articles-and-commentary/1937-the-russian-language-in-azerbaijan-an-outdated-relic, (30/4/2017).

Լեռնային Ղարաբաղը և հայ-ռուսական հարաբերությունները

Թեև հոդվածում բազմիցս նշվել է ԼՂ հակամարտության մասին, խնդիրն ունի հավելյալ պարզաբանման կարիք հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Կա այնպիսի կարծիք, որ Ռուսաստանը վճռորոշ դերակատարություն ունի հակամարտության մեջ, ինչը միանշանակ չէ[30]: Թեև Ռուսաստանը մեծապես նպաստում է Հայաստանի անվտանգության հզորացմանը, նախագահ Պուտինը հայտարարել է, որ չի ցանկանում, որ Ռուսաստանը գլխավոր դերակատարություն ունենա հակամարտության մեջ[31]: Պատեհ առիթի դեպքում Ռուսաստանը միջամտում է, սակայն ոչ այն հսկայական ծավալով, որ ոմանք կարծում են: Քանի որ «հետխորհրդային Հայաստանի բնորոշ առանձնահատկություններից է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը»[32], Հայաստանը ներպետական և արտաքին քաղաքականության բազմաթիվ որոշումներ ընդունում է՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում հավանական զարգացումները: Քանի որ սկսած 80-ական թվականների վերջից մեծ թվով հայեր սպանվել են Բաքվում, Սումգայիթում և զոհվել են հակամարտության գոտում[33], Հայաստանը մշտապես զգոն է և «փնտրում է այլ դաշնակիցներ եթե ոչ անվտանգության, ապա առնվազն տնտեսական ոլորտում»[34]: Հետևաբար, վերոնշյալ գործոններին զուգահեռ, որոնք Հայաստանին պարտադրում են իր արտաքին քաղաքականությունը կենտրոնացնել նախևառաջ Ռուսաստանի ուղղությամբ, Հայաստանի գլխավոր առաջնայնություններից է Լեռնային Ղարաբաղի խոցելի բնակչության պաշտպանությունը: Էթնիկ բռնությունների գոտին պաշտպանելու ջանքերի կենտրոնացման արդյունքում

[30] **De Waal T.,** The Karabakh Conflict as “Project Minimum,” *Carnegie Moscow Center*, 2018, https://carnegie.ru/commentary/75584, (19/01/2019).
[31] Նույն տեղում:
[32] **Delcour L., Wolczuk K.,** նշվ. աշխ., էջ 502:
[33] **Cox C., Eibner J.**, Ethnic Cleansing in Progress: War in NagornoKarabakh, Institute for Religious Minorities in the Islamic World, 1993, p. 66.
[34] Նույն տեղում:

Հայաստանը ձգտում է ամրապնդել իր տնտեսությունը և ենթակառուցվածքները, ինչն առաջարկում է ԵՄ-ն, միաժամանակ ցանկացած գնով խուսափելով օտարանալ Ռուսաստանից:

Եզրակացություն

Արդյո՞ք Ռուսաստանը դրդում է Հայաստանին դառնալ ավելի ռուսամետ: Այդ հարցի հակիրճ պատասխանը հետևյալն է. Ռուսաստանը կարիք չունի Հայաստանին պարտադրել որդեգրել բացառապես ռուսամետ դիրքորոշում, քանզի Հայաստանի արտաքին անվտանգության, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ռազմական անվտանգության առնչությամբ մի շարք խնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է Ռուսաստանի հետ համագործակցության մակարդակով: Բացի այդ, կան նաև Հայաստանը Ռուսաստանին կապող պատմական արմատներ, և վերջիններս էականորեն պարզեցնում են Ռուսաստանի ջանքերը՝ ուղղված Հայաստանի վրա ազդեցության պահպանմանը: Ադրբեջանի և Վրաստանի դեպքերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ հայ-ռուսական հարաբերությունները չպետք է ընդհանրացվեն Հարավային Կովկասի մնացած հատվածի հետ, այլ պետք է դիտարկվեն որպես Հայաստանի համար առանձնահատուկ հարաբերություններ: Եթե Ռուաստանի հետ հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններում Հայաստանը խմբավորվեր Հարավային Կովկասի այլ երկրների հետ, լուրջ վտանգ կառաջանար՝ անտեսելու համար այն փաստը, որ այլ կենտրոններ Հայաստանին չեն առաջարկում Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության այլընտրանքեր՝ անվտանգության կենսական հարցերի լուծման համար:

A Necessary Turn to Russia: Armenian-Russian Relations

COREY ANNE CHERRINGTON
Columbia University, USA

This paper details the development of Armenian-Russian relations after Armenia restored its independence, analyzing policies and attitudes of both Armenia and Russia towards one another over that period. Additionally, Armenia's aspirations with the EU in regards to trade are mentioned and are used to compare Armenian foreign policy intentions with the real outcomes. Russian intervention in Armenia seems prominent, and seems to be coercing Armenia into a certain direction, both politically and economically. Over the years, Armenia has indicated its desire to move away from Russia in their foreign policy decisions, but they have not been wholly successful in doing so because of historic and contemporary Russian dominance in the region. The essay also briefly discusses Azerbaijan and Georgia's relations with Russia in order to better contextualize Russia's influence in the Caucasus region. This is notable because, although Armenia, Azerbaijan, and Georgia are in very close proximity geographically, there are a number of factors other than geography that have influenced the evolution of Russian prominence in the region. For example, while Azerbaijan has been able to latch on to other big powers, Armenia continues its cooperation both with the West and Russia traditionally keeping it closer to Russia. This paper details the development of Armenian-Russian relations after Armenia restored its independence, analyzing policies and attitudes of both Armenia and Russia towards one another over that period. Additionally, Armenia's aspirations with the EU in regards to trade are mentioned and are used to compare Armenian foreign policy intentions with the real outcomes. Russian intervention in Armenia seems prominent, and seems to be coercing Armenia into a certain direction, both politically and economically. Over the years, Armenia has indicated its desire to move away from Russia in their foreign policy decisions, but they have not been wholly successful in doing so because of historic and contemporary Russian dominance in the region. The essay also briefly discusses Azerbaijan and Georgia's relations with Russia in order to better contextualize Russia's influence is not the same among all countries in the Caucasus region. This is notable because, although Armenia and Azerbaijan are in very close proximity geographically, there are a number of factors other than geography that influenced the evolution of Russian prominence in the region. Indeed, while Azerbaijan has been able to latch on to other big powers, Armenia continues its cooperation both with the West and Russia traditionally keeping it closer to Russia.